ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# ԳՅՈՒՄՐՈՒ ՏՈՒՆ – ԻՆՏԵՐՆԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

---

« 11 » դեկտեմբեր 2014թ N ԳԾ - 145

*<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով*
*շրջանակային համաձայնագրերի միջոցով*
*գնում կատարելու ընթացակարգի հնարավոր*
*մասնակիցների ղեկավարներին*

*Հարգելի մասնակից*

*ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու տուն-ինտերնատ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:*
*Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ԳՏԻ-ՇՀԱՊՁԲ-11/1>>:*

*Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի Երևանյան խճուղի 18 հասցեով , մինչև 2014թ. դեկտեմբերի 23 -ը, ժամը 12:00 -ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Օ. Մկրտչյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:*

*Հայտերը կբացվեն ք. Գյումրի Երևանյան խճուղի 18 հասցեում՝ դահլիճում, 2014թ դեկտեմբերի 23 -ին , ժամը 12:00 -ին: Գնման առարկա է հանդիսանում <<Գյումրու տուն-ինտերնատ >> ՊՈԱԿ -ի կարիքների համար՝ վառելիքի ձեռքբերումը:*

*<< Գյումրու տուն-ինտերնատ >> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ վառելիքի մատակարարման (որը կազմված է՝ 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:*

*Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝*

*ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,*
*բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*

*Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:*

Մասնակիցները հայտով ներկայացնում են նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական նկարագիրը:
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<< Գյումրու տուն-ինտերնատ >> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mr.G.inter@mail.ru

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ Ն. Մարգարյան

Կ.Տ

377514 ք. Գյումրի, Երևանյան խճուղի 18
☎ (0312) 4 19 10, 4 08 21